# ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

## § 20. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1 Մակեդոնական բանակի հարվածային ուժը փալանգան էր: Այն կազմված էր ծանրազեն հետևակից, որը շարվում էր մինչև 16 շարք խորությամբ: Առաջին շարքի զինվորների նիզակները 2 մ էին, ամեն հաջորդ շարքինը՝ 1 մետրով ավելի: Դիմացից փալանգան նման էր փշոտ ոզնու, ոչ մի բանակ չէր դիմանում նրա հարվածին: Փալանգայի թույլ տեղը թևերն էին, որոնք պաշտպանում էր ավագանուց կազմված հեծելազորը:



# ԳԱՎԳԱՄԵԼԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ Ք.Ծ.Ա. 331թ.




Դարեհ III–ի բանակի աջ թևում մակեդոնացիների զորքի դեմ կռվում էին Հայաստանի երկու սատրապների զորքերը: Նրանք հաղթեցին մակեդոնացիներին և ներխուժեցին նրանց թիկունքը, սակայն Դարեհ III–ի փախուստը վճռեց ճակատամարտի ելքը: Հայկական ուժերը նահանջեցին ***Հայաստան, որը, Դարեհի պարտության հետևանքով, փաստորեն վերագտավ իր անկախությունը***: